ԱՐՑԱԽ

ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ARTSAKH

ENDANGERED HERITAGE

АРЦАХ

НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ

1 ՄԱՍ PART ЧАСТЬ

ԵՐԵՎԱՆ YEREVAN ЕРЕВАН 2023



ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ
HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY
АРМЯНСКИЙ КУЛЬТУРНЫЙ И ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ СОЮЗ «АМАЗГАИН»

ՀԱՅԿԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՂ ՀԻՄՆԱԴՐԱՄ
RESEARCH ON ARMENIAN ARCHITECTURE FOUNDATION
ФОНД ПО ИЗУЧЕНИЮ АРМЯНСКОЙ АРХИТЕКТУРЫ

Քորթոշյան Ռաֆֆի
Արցախ. վտանգված ժառանգություն, մաս 1 / Ռ. Քորթոշյան: ՀՃՈՒ հիմնադրամ / Ռ. Քորթոշյան.-Եր.:
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամ, 2023.-140 էջ:

Նախագիծն իրականացվել է
Համազգային հայ կրթական և մշակութային միության Հայաստանի ու Արցախի գրասենյակների նախաձեռնությամբ,
Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող հիմնադրամի աշխատասիրությամբ, ինչպես նաև
ՀՅԴ «Նիկոլ Աղբալյան» ուսանողական միության և Արցախի Հանրապետության ԿԳՄՍ նախարարության
«Պատմական միջավայրի պահպանության պետական ծառայություն» ՊՈԱԿ-ի համագործակցությամբ:

This project was initiated by Hamazkayin Armenian Educational and Cultural Society's Yerevan and Artsakh offices. It is based on the work of Research on Armenian Architecture Foundation and was brought to life in partnership with Nikol Aghbalian Students' Union of the ARF and the State Service for the Preservation of Historical Environment, a state non-commercial organization of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Artsakh

Проект осуществлен Фондом по изучению армянской архитектуры по инициативе филиалов Армянского культурного и образовательного фонда «Амазгаин» в Армении и Арцахе, при сотрудничестве со Студенческим союзом АРФД им. Никола Агбаляна, при участии ГНКО «Государственная служба охраны исторической среды» при Министерстве культуры, по вопросам молодежи и туризма Республики Арцах.

Հրատարակության հովանավորներ
Յակոբ Քավարեանի ծնողներ՝ ի հիշատակ լուսահոգի որդու,
Նյու Յորքի Սբ. Լուսավորիչ մայր եկեղեցու հոգևոր հովիվ տեր Մեսրոպ Լագիսեան,
Անդրե Էլիասեան

Publication sponsorship by
Jacob Kavarian's parents in memory of their late son
Rev. Fr. Mesrob Lakissian, Pastor of St. Illuminator's Armenian Apostolic Cathedral in New York
Andre Eliasian

Спонсоры издания:
родители Акопа Каваряна в светлую память о своем сыне,
духовный пастырь собора Св. Григория Просветителя в Нью-Йорке отец Месроп Лагисян,
Андрэ Элиасян

ISBN 978-9939-843-62-9

© ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ, 2023
© HAMAZKAYIN ARMENIAN EDUCATIONAL AND CULTURAL SOCIETY, 2023
© АРМЯНСКИЙ КУЛЬТУРНЫЙ И ОБРАЗОВАТЕЛЬНЫЙ СОЮЗ «АМАЗГАИН», 2023

ԱՐՑԱԽ.
ՔՐԻՍՏՈՆՅԱ ԱՇԽԱՐՀԻ ԱԿՈՒՆՔՆԵՐՈՒՄ

Աշխարհում քրիստոնեական քաղաքակրթության ստեղծման ու տարածման, պետականորեն նոր կրոնն ընդունելու գործում հայ ժողովրդի և Հայաստանի դերը բացառիկ է: Այդ դարակազմիկ պատմական իրադարձության մեջ Հայոց երկրի տարբեր տարածաշրջաններ իրենց ուրույն տեղն են ունեցել: Դրանց մեջ առանձնահատուկ է եղել և մնում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մի ընդարձակ հատվածի՝ Մեծ Հայքի թագավորության տասներորդ նահանգ Արցախի նշանակությունը:

Հայաստանում պետական մակարդակով քրիստոնեության ընդունումից հետո Արցախը դարձել է Հայոց պետականության հենասյուներից մեկը: 481-484 թթ. Վահանանց հաղթական պատերազմը ստիպել է Սասանյան Պարսկաստանին Արևելյան Հայաստանում ճանաչել հայերի ինքնիշխան ապրելու իրավունքը և առժամանակ դադարեցնել կրոնական հալածանքները: 480-ական թվականների կեսերից Հայոց պետականությունն ինքնավար տարբերակով՝ մարզպանության կարգավիճակով, վերականգնվել է ինչպես Արևելյան Հայաստանի կենտրոնական հատվածում՝ Արարատյան երկրում, այնպես էլ Վաչագան Բարեպաշտ արքայի գլխավորությամբ Հայոց Արևելից կողմերում՝ Արցախում: Լեռներով մյուս նահանգներից կտրվածությունը, ինքնաբավ ապրելու բնական պայմանների առկայությունը հնարավորություն են տվել Արցախին դարեր շարունակ մնալու հայկական պետականության կրողներից մեկը, հետևապես նաև՝ հայ մշակույթի և հայկական քրիստոնեական ինքնության բնօրրանը:

Հետագա դարերում Արցախի Առանշահիկները, Հասան-Ջալալյանները և տոհմիկ ազնվականական այլ տներ շարունակել են Հայոց պետականության ու հայ մշակույթի ավանդույթները: Արցախի և Սյունիքի քաղաքական ու քաղաքակրթական տեղն ու դերը հայ իրականության մեջ ավելի են ընդգծվել ուշ միջնադարում և նոր ժամանակներում: XVIII դարում սկսվել է պետականության վերականգնման գործնական քայլերի փուլը (1722-1747 թթ.): Սյունիքում Դավիթ Բեկի գլխավորած ազատագրական պայքարը պսակվել է հաջողությամբ. 1724 թ. Իրանի Թահմասպ II շահը ճանաչել է Սյունիքի հայկական իշխանությունը՝ հաշվի նստելով հայերի ազատագրական ձգտումների հետ և նպատակ ունենալով Դավիթ Բեկի իշխանապետությունն օգտագործել ընդհանուր թշնամու՝ Օսմանյան կայսրության դեմ:

Հայ-իրանական համագործակցության շնորհիվ 1730-ական թվականներին Նադիր խանի (շահ) ջանքերով ամրապնդվել են հայկական մելիքությունները ոչ միայն Արևելյան Հայաստանի լեռնային շրջաններում (Սյունիք, Արցախ, Գեղարքունիք), այլև հարթավայրերում: Նրա 1734 թ. հրովարտակով Արցախի Դովշանլու (այժմ՝ Առաջաձոր, Մարտակերտի շրջան) գյուղի ավագերեց Դավիթը հաստատվել է ինչպես այդ, այնպես էլ Խաչենի մի քանի այլ գյուղերի ավագի ու մելիքի պաշտոնում:

Օսմանյան կայսրության դեմ պարսիկների հետ դաշնակցած հայ մելիքների մղած պայքարում փաստական ինքնավարություն են ձեռք բերել հատկապես Արցախի մելիքները Դիզակի մելիք Եգանի գլխավորությամբ: Վարանդայի, Դիզակի, Ջրաբերդի, Խաչենի և Գյուլիստանի գավառներում 1736 թ. ծնունդ է առել հայկական նոր ինքնավարություն՝ Խամսայի (արաբերեն խամսա՝ հինգ) մելիքությունները: Պատահական չէ, որ Արցախի դերը խիստ կարևորվել է XVIII դ. երկրորդ կեսին առաջ քաշված Հայաստանի ազատագրության ծրագրերում:

Նորագույն ժամանակաշրջանում Արցախը, ապա նաև Սյունիքը, արտաքին գործոնների պատճառով հնարավորություն չունենալով միանալ Հայաստանի Հանրապետությանը, ստեղծել են սեփական պետական կազմավորումներ և պայքար ծավալել Մայր հայրենիքին միանալու համար: 1918 թ. հուլիսի 22-ին Շուշիում հրավիրվել է Արցախահայության առաջին համագումարը, որը կազմել է Ղարաբաղի ժողովրդական կառավարություն և երկրամասը հռչակել անկախ վարչատարածքային միավոր: Հետագա համագումարներում Արցախի հայությունն իր որոշումներով կրկնել է Հայաստանի Հանրապետությանը միանալու իր վճռականությունը: Ադրբեջանի ոտնձգությունների դեմ մղած համառ ու արյունալի պայքարից հետո Արցախահայության IX համագումարը 1920 թ. ապրիլի 25-ին երկրամասը հռչակել է Հայաստանի Հանրապետության մաս: Այդ երկու տարիների ընթացքում Արցախը դարձել է հայոց նորագույն պետականության կերտման գլխավոր կենտրոններից մեկը:

Քեմալաբոլշևիկյան համագործակցության հետևանքով 1920 թ. դեկտեմբերի 2-ին՝ Հայաստանի Հանրապետության անկումից հետո, անկախության դրոշը շարունակել է ծածանել նույն ամսի 25-ին Գարեգին Նժդեհի ղեկավարությամբ Տաթևի համազանգեզուրյան առաջին համագումարում հռչակված Ինքնավար Սյու-

նիքը, որը 1921 թ. ապրիլի 27-ին վերանվանվել է Լեռնահայաստանի, իսկ հունիսի 1-ին՝ Հայաստանի Հանրապետություն:

Հայաստանի համար ստեղծված արտաքին և ներքին անբարենպաստ պայմաններում հայկական մի շարք տարածքներ (Նախիջևան, Լեռնային Ղարաբաղ, Ուտիք, Կարսի մարզ, Սուրմալուի գավառ և այլն) դուրս են մնացել Խորհրդային Հայաստանի սահմաններից: Դրանցից Ադրբեջանի կազմում հանիրավի հայտնված Լեռնային Ղարաբաղին 1923 թ. հուլիսի 7-ին տրվել է ինքնավար մարզային կարգավիճակ. կազմավորվել է Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը (ԼՂԻՄ): Վերջինս թեև զրկված էր ինքնիշխանության շատ տարրերից, այնուամենայնիվ, իր սահմանափակ ինքնավարության շնորհիվ կարողացել է դիմակայել Ադրբեջանի ազգայնամոլ քաղաքականությանը և մինչև 1988 թ.՝ Արցախյան շարժումը, պահպանել երկրամասի ընդհանուր հայկական դիմագիծը:

1991 թ. սեպտեմբերի 2-ին կյանքի է կոչվել Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը (Արցախի Հանրապետություն), իսկ 21-ին անցկացված համաժողովրդական հանրաքվեից հետո՝ Հայաստանի Հանրապետությունը: Այս գործընթացի հիմքերը փաստորեն դրվել են Արցախյան ազատագրական հուժկու շարժումով, 1990 թ. մայիսին կայացած բազմակուսակցական, ժողովրդավարական ընտրություններով և նորընտիր Գերագույն խորհրդի (հետագայում՝ Ազգային ժողով) կողմից օգոստոսի 23-ին ընդունած «Անկախության հռչակագրով»:

Այժմ հայկական երկու պետությունները՝ Հայաստանի Հանրապետությունն ու Արցախի Հանրապետությունը, բոլորելով իրենց վերանկախացման երեսնամյակը, աշխարհաքաղաքական ծանրագույն պայմաններում իսկ շարունակում են հայոց հինգհազարամյա պետականության ու քաղաքակրթական զարգացման ուղին:

Պետականության գրեթե անընդհատական գոյությունն Արցախում հնարավորություն է տվել առանձնահատուկ բարձրության հասցնելու հայ մշակութային ու կրթական կյանքը, քրիստոնեական արժեքները: Պատահական չէ, որ Հայոց հինավուրց այդ երկրամասը վերածվել է ոչ միայն հայկական, այլ նաև տարածաշրջանի, մասնավորապես՝ Արևելյան Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի քրիստոնեական քաղաքակրթության տարածման յուրահատուկ աղբյուրի: Դեռ քրիստոնեությունը որպես պետական գաղափարախոսություն հռչակելուց շատ առաջ Արցախում քրիստոնյա քարոզիչները տարածել են Հիսուսի ուսմունքը, հիմնադրել բազմաթիվ մատուռներ ու եկեղեցիներ: Դրանց մեջ հիշատակության արժանի է հատկապես Սուրբ Դադի կողմից դեռ I դարում հիմնված մատուռը, որի վրա հետագայում պատմական Վայկունիք-Ծար (հետագայում՝ Խաչեն, Քարվաճառ) գավառում վեր է խոյացել Դադիվանքի վեհաշունչ տաճարը:

Քրիստոնեությունը նոր թափով տարածում է ստացել երկրամասում, երբ IV դարի երկրորդ քառորդին Արցախում Հայ եկեղեցու գլուխ է կանգնել Հայոց առաջին կաթողիկոս Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսը, որը նահատակվել է հյուսիսկովկասյան մասքութ ցեղերի դեմ մղված պայքարում: Արցախի տարածքում հայ կրթական կյանքի նոր վերելքը սկսվել է V դարի սկզբից՝ վաղմիջնադարյան նշանավոր Ամարասի վանքում Սուրբ Մեսրոպ Մաշտոցի կողմից Հայոց մեսրոպատառ հայերենով ուսուցանվող առաջին դպրոցի հիմնադրումից հետո:

Հայ եկեղեցաշինությունը, խաչքարային ու ձեռագրային արվեստն ինչպես ամբողջ Հայաստանում, այնպես էլ Արցախում աննախադեպ բարձրության են հասել IX-XIV դարերում: Հայ եկեղեցու Արցախի թեմը վերածվել է ինքնուրույն՝ Աղվանից, ապա՝ Գանձասարի կաթողիկոսության: Կառուցվել են քրիստոնեական սքանչելի անհամար կոթողներ, որոնց մասին ստեղծվել է ահռելի գրականություն:

Արցախի քաղաքական պատմության և մշակութային արժեքների ուսումնասիրության բնագավառում վերջին տասնամյակներին հրկայածավալ աշխատանք է կատարել հանրաճանաչ Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կազմակերպությունն իր լուսահոգի նշանավոր ղեկավարների՝ Արմեն Հախնազարյանի և Սամվել Կարապետյանի գլխավորությամբ: Այդ կազմակերպության նվիրյալ աշխատակիցներից այդ գործն այսօր շարունակում է նաև հայրենադարձ երիտասարդ գիտնական Ռաֆֆի Քորթոշյանը: Նրա՝ 2022 թ. անգլերենով հրատարակված արժեքավոր գիրք-ալբոմը, որտեղ ներկայացված են Արցախի բնակավայրերի բազմաթիվ քրիստոնեական կոթողներ, նոր լույս է սփռում Հայոց հայրենիքի անքակտելի մի հատվածի՝ Արցախի մշակութային կյանքի պատմության վրա, բացահայտում է հատկապես 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո հայկական նյութական ժառանգությունը ոչնչացնելու ադրբեջանական իշխանությունների վայրագ քաղաքականության էությունը:

Հանրության դատին ներկայացվող եռալեզու սույն աշխատանքը վերոհիշյալ հետազոտության նորացված ու լրամշակված տարբերակն է: Համոզված ենք, որ այն կարևոր նշանակություն կունենա Արցախի պատմամշակութային հարուստ ժառանգությունն աշխարհին ներկայացնելու և այն թուրք-ադրբեջանական ոտնձգություններից պաշտպանելու գործում:

Աշոտ Մելքոնյան
ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի ակադեմիկոս

ARTSAKH.
IN THE ORIGINS OF THE CHRISTIAN WORLD

Armenia and the Armenian people have played an exceptional role in the creation and spread of Christian civilization, and in the adoption of Christianity as a state religion. Indeed, different provinces of Armenia participated in this epoch-turning event, but particularly important was the role and significance of Artsakh, the tenth province of the kingdom of Mets Hayk (Armenia Maior) located in the east of the Armenian Highland.

After the adoption of Christianity as a state religion in Armenia, Artsakh became one of the pillars of statehood in the country. The Armenians' victorious struggle against Sassanid Persia between 481 and 484, led by Prince Vahan Mamikonian, forced that empire recognize the right of Armenians to sovereignty in Eastern Armenia and temporarily stop religious persecutions. In the mid-480s, Armenian statehood was restored, as an autonomous satrapy, both in the central parts of Eastern Armenia, in the Araratian country, and in the Eastern Regions of Armenia, namely in Artsakh, where King Vachagan Barepasht (the Pious) reigned. Due to its mountainous geography, being isoldated from the other provinces of Historical Armenia, Artsakh boasted all the natural resources for self-sufficiency and continued its existence, remaining, for centuries, as one of the main carriers of Armenian statehood, and therefore, also as the cradle of Armenian culture and Christian Armenian identity.

In subsequent centuries, the Arranshahiks of Artsakh, the Hasan-Jalalians and other princely families continued the traditions of Armenian statehood and culture. In the late Middle Ages and in the recent period, Artsakh and Syunik started playing an even more important political and civilization-building role. The 18th century marked the beginning of an active struggle (1722 to 1747) aimed at the restoration of statehood. The liberation struggle in Syunik which was led by the prominent Armenian commander Davit Bek resulted in the desired outcome: in 1724 Shah Tahmasp II of Iran recognized him as the leader of Syunik, planning to use the local Armenian principality against their common enemy, the Ottoman Empire.

Thanks to the Armenian-Iranian alliance, in the 1730s, Nadir Khan (Shah) strengthened the positions of the Armenian melikdoms (principalities) not only in the mountainous regions of Eastern Armenia (Syunik, Artsakh, Gegharkunik) but also in the plains. In 1734, for instance, Nadir issued a decree declaring Davit, senior priest of Dovshanlu (Arajadzor, Martakert District) Village of Artsakh, as the head and melik (prince) of this village as well as several others in Khachen.

Thanks to this alliance and the struggle against the Ottoman Empire, the Armenian meliks, particularly those of Artsakh, de facto gained autonomy under the leadership of Melik Yegan of Dizak. In 1736 a new Armenian autonomous entity —called Melikdoms (Principalities) of Khamsa (from the Arabic word 'khamsa' meaning 'five')—was founded in the districts of Varanda, Dizak, Jraberd, Khachen and Gyulistan. Thanks to the existence of this autonomous entity, the role of Artsakh was particularly emphasized in the 18th-century projects for Armenia's liberation.

In the most recent period, due to external factors, Artsakh and afterwards also Syunik were not included as part of the newly-founded Republic of Armenia; for this reason, these provinces established their own state entities and began a struggle to reunite with Mother Armenia. The First Conference of Artsakh Armenians, which was held in Shushi on 22 July 1918, established the Government of the People of Karabakh, declaring the region as an independent administrative-territorial unit. In their subsequent conferences, the Armenians of Artsakh adopted several decisions reiterating their determination to become part of the Republic of Armenia. After a fierce struggle against the encroachments of Azerbaijan, on 25 April 1920, the 9th Conference of Artsakh Armenians declared the region as part of the Republic of Armenia. During those two years, Artsakh became one of the most important centres of the establishment of Armenian statehood.

On 2 December 1920, the Republic of Armenia fell due to the alliance between Kemalist Turkey and the Bolsheviks, while the region of Syunik preserved its independence: it was proclaimed autonomous at the First Conference of Zangezur held in Tatev on 25 December of the same year under Garegin Nzhdeh's leadership. On 27 April 1921, the Republic of Lernahayastan (Mountainous Armenia) was established in Syunik, being renamed Republic of Armenia on 1 June.

Under certain unfavourable circumstances—both internal and external—a number of historical Armenian lands (Nakhichevan, Mountainous /Nagorno/ Karabakh, Utik, Kars Region, Surmalu District, etc.) were left outside the borders of Soviet Armenia. Mountainous (Nagorno) Karabakh, which had unjustly been annexed to Soviet Azerbaijan, was given the status of an autonomous region on 7 July 1923. Despite the fact that the Autonomous Region of Nagorno Karabakh lacked many components of sovereignty, it was able to resist Azerbaijan's nationalist policy and preserve the Armenianness of the region thanks to its limited autonomy until the Artsakh movement of 1988.

On 2 September 1991, the Republic of Nagorno Karabakh (Republic of Artsakh) was founded, being

followed by the proclamation of the Republic of Armenia after a referendum held on 21 September of the same year. Broadly speaking, the restoration of Armenian statehood had been promoted by Artsakh's fierce liberation struggle as well as by the democratic multi-party elections held in May 1990 and the Declaration of Independence adopted by the newly-elected Supreme Council (afterwards: National Assembly) on 23 August of the same year.

At present, despite the grave geopolitical situation facing them, the Republics of Armenia and Artsakh continue building statehood and civilization, enriching Armenia's legacy of five thousand years.

Thanks to statehood which was almost uninterrupted in Artsakh throughout its history, Armenian cultural and educational life reached the peak of its development in the region. It should also be noted that Artsakh played a significant role for the promotion of Christian values: Christian civilization spread from this ancient Armenian land all over the region, particularly to Eastern Transcaucasia and the North Caucasus. Long before the official adoption of Christianity, this religion was spread in Artsakh by different Christian preachers who also built numerous chapels and churches in the region. Special mention should be made of a chapel founded by St. Dad in the historical Armenian district of Vaykunik-Tsar (also known by the names of Khachen and Karvajar) as early as the first century: afterwards the majestic monastic complex of Dadivank was founded around this chapel.

Christianity was especially widely preached in Artsakh in the second quarter of the 4th century, when the religious leader of the region was Grigoris, the grandson of Gregory the Illuminator, the first Catholicos of All Armenians (Grigoris was killed during the struggle against the North Caucasian Maskut tribes). Educational activities were further promoted in Artsakh in the early 5th century, when Mesrop Mashtots opened the first school for teaching the Armenian alphabet in the renowned early medieval monastery of Amaras.

The period between the 9th and 14th centuries was marked with unprecedented development in the construction of Armenian churches as well as in the art of cross-stones and manuscript creation throughout Armenia, including Artsakh. Artsakh Diocese of the Armenian Apostolic Church grew into an independent catholicosate which was first named Catholicosate of Aghvank (Caucasian Albania) and afterwards Catholicosate of Gandzasar. A countless number of magnificent Christian monuments were built, and hundreds of scientific works were devoted to them.

In recent decades, the study of the political history and cultural heritage of Artsakh has been largely promoted by the well-known Research on Armenian Architecture (RAA) Foundation, and particularly, by its Founding Director Armen Hakhnazarian and Director Samvel Karapetian of blessed memory. At present this work continues thanks to the devoted young researcher Raffi Kortoshian, who repatriated to Armenia some years ago. In 2022 he published an English-language book-album devoted to the Christian legacy of Artsakh and particularly exposing the brutal policy of annihilation exercised by the Azerbaijani authorities against the historical Armenian monuments that fell under their control in the aftermath of the 44-day war of 2020.

This trilingual publication is an updated edition of the aforementioned book-album. We are convinced that it will play a significant role in raising awareness of the rich historical and cultural heritage of Artsakh and in protecting it against Turkish-Azerbaijani encroachments.

Ashot Melkonian
Academician in the National Academy of Sciences of the Republic of Armenia

АРЦАХ:
У ИСТОКОВ ХРИСТИАНСКОГО МИРА

Армения и армянский народ сыграли исключительную роль в формировании и распространении христианской цивилизации. Среди разных исторических регионов особенно велико значение десятой провинции Великой Армении – Арцаха, расположенного в восточной части Армянского нагорья.

После принятия христианства на государственном уровне Арцах стал одним из столпов армянской государственности. В течение веков Арцах оставался одним из центров политической самостоятельности благодаря изоляции от других регионов гористым ландшафтом и наличию природных условий для самостоятельного существования. Именно поэтому Арцах – один из важных центров армянской культуры и христианской идентичности.

В 481–484 годах в Армении и Иберии (Картли) началось восстание во главе с военачальником Вааном Мамиконяном против насаждения зороастризма Сасанидским Ираном. Оно закончилось победой христиан. Персидский шах прекратил религиозные гонения и признал право армян на самоуправление в Восточной Армении. С середины 480-х годов армянская автономия в форме марзпанства была восстановлена не только в стране Араратской – центральной части Восточной Армении, но и в восточных краях Армении, в том числе в Арцахе и Утике во главе с царем Вачаганом Благочестивым.

В последующие века Араншахики, Асан-Джалаляны и другие княжеские роды продолжили традиции армянской государственности и культуры. Политическая и цивилизационная роль Арцаха, а также Сюника усилилась в позднем средневековье и в Новое время. В первой половине XVIII века начался этап восстановления государственности (1722–1747 годы). Возглавляемая Давидом Беком национально-освободительная война увенчалась успехом. В 1724 году иранский шах Тахмасп II признал его власть в Сюнике с целью использовать его ресурсы против общего врага – Османской империи.

В результате армяно-иранского сотрудничества в 1730-х годах Надир-шах укрепил армянские меликства (княжества) не только в горных (Сюник, Арцах, Гегаркуник), но и равнинных районах Восточной Армении. Его фирманом 1734 года протоиерей Давид из села Довшанлу (ныне Арачадзор, Мартакертский район) в Арцахе стал меликом и сельским старостой того же села и нескольких других сел Хачена.

Среди армянских меликов, которые в союзе с персами боролись против Османской империи, фактически достигли самоуправления мелики Арцаха во главе с Еганом – меликом Дизака. В 1736 году образовались армянские меликства Хамсы (по-арабски «хамса» – «пять»), в состав которых вошли гавары (области) Варанда, Дизак, Джраберд, Хачен и Гюлистан. Неслучайно, что во второй половине XVIII века Арцаху отводилась исключительная роль в планах по освобождению Армении.

В новейший период Арцах, как и Сюник, не имея возможности присоединиться к Армении из-за внешних факторов, создали собственные государственные образования и развернули борьбу за объединение с Родиной. 22 июля 1918 года в Шуши был созван первый съезд армян Арцаха, который провозгласил его самостоятельной административно-территориальной единицей и сформировал национальное правительство. На последующих съездах армяне Арцаха повторили решимость присоединиться к Республике Армении. После упорной и кровавой борьбы против посягательств Азербайджана армяне Арцаха провозгласили край частью Республики Армении на IX съезде, созванном 25 апреля 1920 года. За указанные два года Арцах стал одним из главных центров строительства армянской государственности в новейшей истории.

В результате кемалистско-большевистского сотрудничества 2 декабря 1920 пала Республика Армения, однако 25 числа того же месяца в Татеве был созван Первый общезангезурский съезд, провозгласивший Автономную Сюникскую Республику во главе с Гарегином Нжде. 27 апреля 1921 года она была переименована в Лернаайастан (Республику Горная Армения), а 1 июня – в Республику Армения.

В результате неблагоприятных внешних и внутренних факторов некоторые армянские территории (Нахиджеван, Нагорный Карабах, Утик, Карсская область, Сурмалинский уезд и др.) оказались вне границ Советской Армении. Из них Нагорный Карабах был несправедливо включен в состав Азербайджана. 7 июля 1923 года была образована Автономная область Нагорного Карабаха (АОНК, позднее – НКАО). Хотя она была лишена многих элементов суверенитета, тем не менее, благодаря ограниченной автономии смогла противостоять националистической политике Азербайджана и сохранить свой армянский облик вплоть до 1988 года, когда началось Арцахское освободительное движение.

2 сентября 1991 года была провозглашена Нагорно-Карабахская Республика (Республика Арцах), а после всенародного референдума 21 числа – Республика Армения. Фундамент этих событий фактически был заложен в ходе мощного Арцахского освободительного движения, многопартийных демократических выборов, состоявшихся в мае 1990 года, и принятия 23 августа «Декларации независимости Армении» новоизбранным Верховным Советом (с 1995 года – Национальное собрание).

После 30-летней годовщины восстановления своей независимости, в сложнейших геополитических условиях два армянских государства – Республика Армения и Республика Арцах, продолжают путь 5000-летнего армянского государственного и цивилизационного развития.

Армянская культурно-просветительская жизнь особенно процветала в Арцахе благодаря почти непрерывному существованию политической самостоятельности. Недаром эта древняя армянская территория стала уникальным источником распространения христианской цивилизации в регионе, особенно в Восточном Закавказье и на Северном Кавказе. Задолго до того, как христианство было провозглашено государственной религией, христианские проповедники распространяли учение Христа, основывали множество часовен и церквей в Арцахе. Среди них стоит упомянуть часовню, основанную святым Дади в I веке, на месте которой позже был построен величественный храм Дадиванк, расположенный в гаваре Вайкуник-Цар (позднее – Хачен, Карвачар).

Новый этап распространения христианства начался во второй четверти IV века, когда главой церкви в Арцахе стал внук первого католикоса Армении Григория Просветителя – Григорис, который принял мученическую смерть от рук царя маскутов. Новый подъем просвещения на территории Арцаха начался в начале V века, после основания святым Месропом Маштоцем первой школы в знаменитом раннесредневековом монастыре Амарас, в котором преподавали на армянском языке.

Церковное строительство, рукописное искусство и искусство ваяния хачкаров как во всей Армении, так и в Арцахе достигли небывалого расцвета в IX–XIV веках. Арцахская епархия Армянской Апостольской Церкви стала самостоятельным католикосатом, известным как Агванский или Гандзасарский католикосат. Были построены бесчисленные замечательные христианские памятники, которым посвящена богатая научная литература.

В последние десятилетия политическая история и культурные ценности Арцаха стали объектом исследования Фонда по изучению армянской архитектуры (до 2010-го года – Общественная организация) под руководством корифеев Армена Ахназаряна и Самвела Карапетяна. Проделанную ими огромную работу сегодня продолжает один из преданных сотрудников фонда, молодой ученый-репатриант Раффи Кортошян. Изданная в 2022 году на английском языке ценная книга, в которой представлены многие христианские памятники населенных пунктов Арцаха, проливает новый свет на историю культурной жизни Арцаха – этой неотъемлемой части армянской Родины, раскрывает суть варварской политики азербайджанских властей по уничтожению армянского материально-культурного наследия, особенно после 44-дневной войны.

Данный трехъязычный альбом является дополненным вариантом вышеупомянутой книги. Уверены, что благодаря ему мир узнает о богатом историко-культурном наследии Арцаха, а представленные материалы помогут защитить армянское наследие от турецко-азербайджанских посягательств.

Ашот Мелконян
Академик Национальной академии наук РА

ԱՐՑԱԽ. ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Անհիշելի ժամանակներից Արցախը միշտ ակտիվ դերակատարություն է ունեցել Հայաստանի պատմության մեջ: Հենց այս նահանգում է Հայոց Տիգրան Մեծ արքան (մ.թ.ա. 95-55) հիմնել Տիգրանակերտ անունը կրող չորս քաղաքներից մեկը: Ըստ Աշխարհացույցի՝ Արշակունիների արքայատոհմի օրոք Արցախը Մեծ Հայքի 15 նահանգներից մեկն էր: Այն գտնվում էր Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելքում, ուներ 12 գավառ և զբաղեցնում էր 11.528 քառ. կմ տարածք:

Արցախը կարևոր դերակատարություն է ունեցել նաև Հայաստանի պատմության մեջ այնպիսի շրջադարձային ժամանակաշրջանում, ինչպիսին քրիստոնեության ընդունումն էր: Ա դարի երկրորդ կեսին տարբեր քարոզիչներ Հայաստանում սկսում են տարածել այս կրոնը: Նրանց մեջ էին նաև Քրիստոսի 72 աշակերտներից սբ. Դադը և Եղիշեն, որոնք քրիստոնեություն են քարոզել Արցախում և հետագայում նահատակվել այնտեղ՝ ամփոփվելով Դադիվանքում և Եղիշ Առաքյալի վանքում:

Դ դարում՝ քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն ընդունելուց հետո, Տրդատ Գ արքայի հրամանով նոր կրոնը տարածելու համար քարոզիչներ են ուղարկվում երկրի տարբեր կողմեր: Նրանցից էր սբ. Գրիգորիսը, որը գործունեություն է ծավալել Արցախում և ամփոփվել Ամարասի վանքում:

Նոր կրոնը տարածելու հարցում կարևոր գործոն էր պաշտամունքային վայրերի առկայությունը: Հայաստանում կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ, այդ թվում Արցախում՝ Ծիծեռնավանքը, Տիգրանակերտի և Նոր Հայկաջուրի բազիլիկ եկեղեցիները: Արդեն Դ դարի վերջում Հայաստանի բնակչության զգալի մասը քրիստոնեության հետևորդ էր: Հետագա դարերում Արցախում իշխում են տարբեր ուժեր՝

ARTSAKH: ENDANGERED HERITAGE

Since time immemorial Artsakh has always played an active role in the history of Armenia. It was in this province that King Tigran the Great (95 to 55 BC) founded one of the four cities named after him. According to the *Ashkharatsuyts*, an early medieval Armenian book on geography which shows the political borders of Armenia in the 4th century, during the reign of the Arshakids' royal dynasty, Artsakh was one of the provinces of Armenia Maior. It was located in the northeast of the Armenian Highland and had 12 districts with a total area of 11,528 sq. km.

Artsakh also had its importance during the turning point in the history of Armenia, the adoption of Christianity. Starting from the second half of the first century, different preachers of Christianity spread this religion in Armenia. Among them were Sts. Dad and Elisha, two of the 72 disciples of Christ, both of whom preached Christianity in Artsakh and later suffered martyrdom there: they are buried in the monasteries of Dadivank and Yeghise Arakyal (Elisha the Apostle) respectively (both the monasteries are situated in Artsakh).

After Christianity was proclaimed as a state religion in Armenia in the 4th century, on the order of King Trdat III preachers were sent to different provinces of the country to preach it. One of them, St. Grigoris carried out Christian preaching in Artsakh (he rests in Amaras Monastery of Artsakh).

One of the most important factors in spreading the new religion was the construction of places of worship. Many churches were built throughout Armenia, including the

АРЦАХ: НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ

Арцах всегда играл активную роль в истории Армении. Именно в Арцахе царь Тигран Великий (95–55 годы до н. э.) основал один из четырех городов, названных в его честь. Согласно раннесредневековому армянскому географическому трактату («Ашхарацуйц»), в котором показаны политические границы Армении IV века, во время правления царской династии Аршакидов Арцах был одной из провинций Великой Армении. Он располагался на северо-востоке Армянского нагорья и имел 12 гаваров (округов) общей площадью 11 528 кв. км.

Арцах сыграл значительную роль в поворотный момент для истории армян, когда появилась новая религия – христианство, которую распространяли в Армении разные проповедники, начиная со второй половины I века. Среди них были свв. Дад и Егише, двое из 72-х учеников Христовых, проповедовавшие христианство в Арцахе и впоследствии принявшие там мученическую смерть. Они похоронены в монастырях Дадиванк (Монастырь Дади) и Егише Аракял (Апостола Егише).

После того, как в IV веке христианство было провозглашено государственной религией Армении, по приказу царя Трдата III проповедники были отправлены в разные провинции страны для проповеди новой религии. Один из них, св. Григорис, развернул деятельность в Арцахе и царстве маскутов, где и был убит, а его тело перенесено в Амарас, где и было предано земле.

Одним из важнейших факторов распространения новой религии было строительство культовых сооружений. По всей Армении были построены многочисленные цер-

հայկական և ոչ հայկական: Երկրամասը բնակեցված էր գլխավորապես քրիստոնյա հայերով, իսկ ճարտարապետությունն էլ զարգանում էր հայկական ազգային ավանդույթների համաձայն: Կառուցվում էին վանքեր և եկեղեցիներ, անշուշտ, պաշտամունքային հուշարձանների կառուցումը հատկապես մեծ թափով էր ընթանում, երբ երկրամասը որևէ հայկական թագավորության կամ իշխանության մաս էր կազմում: Է դարից մեզ են հասել Վանքասարի և Օխտը Դռնե վանքի հոյակապ կառույցները: Թ-ԺԱ դդ. պաշտամունքային հուշարձաններից հիշատակության են արժանի Կատոսավանքը, ինչպես նաև Վարազգոմի և Սթունիսի եկեղեցիները:

Արցախում եկեղեցաշինությունը ծաղկում է հատկապես ԺԲ-ԺԳ դարերում, երբ ստեղծվում է հայկական ճարտարապետության արցախյան դպրոցը: Ինչպես երկրի այլ հատվածներում, այնպես էլ այստեղ իշխող ֆեոդալական ընտանիքները սկսում են շինարարական ակտիվ գործունեություն ծավալել՝ կառուցելով հատկապես վանքեր, որոնցից ամենահայտնիներից են Դադիվանքը, Գտչավանքը, Հակոբավանքը, Խաթրավանքը, Հոռեկավանքը, Գանձասարը, Եղիշ Առաքյալի վանքը և այլն:

Պետք է նշել, որ Արցախում ճարտարապետության և արվեստի զարգացումը միանգամայն փոխկապակցված էր Հայաստանի կենտրոնական մասերի արվեստի և ճարտարապետության հետ, ինչի մասին վկայում են ընդհանուր փորձառությունն ու ձեռքբերումները:

Եկեղեցաշինությունն Արցախում նոր վերելք է ապրում նաև ԺԷ-ԺԸ դարերում, երբ հայկական կիսաանկախ մելիքությունների գոյության շնորհիվ վերականգնվում են հին հայկական մի քանի իշխանական ընտանիքների անդամների նախկին իրավունքները և հաստատվում Սեֆյան Պարսկաստանի շահերի կողմից: Այս ժամանակաշրջանից պահպանված շատ եկեղեցիներ ցույց են տալիս, որ ինչպես Հայաստանի այլ հատվածներում, Արցախում ևս կառուցվում են հիմնականում եռանավ բազիլիկներ:

Արցախում եկեղեցաշինությունը վերստին աշխուժանում է 1805 թ. հետո, երբ երկրամասն

basilicas of Tsitsernavank, Tigranakert and Nor Haykajur in Artsakh. In fact, at the end of the 4th century, most of the population of Armenia professed Christianity.

In the following centuries, Artsakh was reigned by various powers (Armenian and non-Armenian), but the region remained predominantly inhabited by Christian Armenians, and architecture developed there according to the traditions of Armenian national architecture. Monasteries and churches continued to be built, the construction of religious monuments being particularly promoted when the region was part of an Armenian kingdom or principality. The church of Vankasar and Okhte Drne Monastery have been preserved as magnificent monuments of the 7th century. Katosavank Monastery as well as the churches of Varazgom and Stunis can be mentioned among structures dating from the period between the 9th and 11th centuries.

The art of construction particularly flourished in Artsakh between the 12th and 13th centuries, when the local school of Armenian architecture was formed. As elsewhere in the country, the reigning feudal families were actively involved in construction activities, especially building monasteries, the best known specimens of which include, but are not limited to, Dadivank, Gtchavank, Hakobavank, Khatravank, Horekavank, Gandzasar and Yeghishe Arakyal.

It should be noted that the architecture and art of Artsakh developed in complete interconnection with the architecture and art of central Armenia, this being marked by shared experience and achievements.

The period between the 17th and 18th centuries marked another stage of flourishing in church building in Artsakh. Thanks to the existence of semi-independent Armenian melikdoms (principalities), the former rights of

кви, включая базилики Цицернаванка, Тигранакерта и Нор (Нового) Айкаджура в Арцахе. Уже в конце IV века большая часть населения Армении исповедовала христианство.

В последующие века Арцах находился под властью различных правителей, как армянских, так и иноверных, но регион оставался преимущественно населенным армянами- христианами, и архитектура здесь развивалась в соответствии с традициями армянского национального зодчества. Особенно поощрялось строительство монастырей и церквей в период вхождения региона в состав армянского царства или княжества. Великолепными памятниками VII века являются церковь Ванкасара и монастырь Охты Дрне («Монастырь семи дверей»), а среди памятников IX–XI веков важно упомянуть монастырь Катосаванк, а также церкви Варазгом и Стунис.

Особенно процветало строительное искусство в Арцахе в XII–XIII веках, когда сформировалась арцахская школа армянского зодчества. Как и повсюду в стране, правящие феодальные семьи активно занимались строительством культовых сооружений, особенно монастырей. Наиболее известные памятники данного периода – Дадиванк, Гтчаванк, Акопаванк, Хатраванк, Орекаванк, Гандзасар и Егише Аракял.

Следует отметить, что архитектура и искусство Арцаха развивались в полной взаимосвязи с архитектурой и искусством центральной Армении и имеют общий опыт в строительстве и инновационных подходах.

Период между XVII и XVIII веками стал еще одним этапом расцвета церковного строительства в Арцахе. Появились полунезависимые армянские меликства (княжества), и прежние права представителей нескольких старинных армянских княжеских родов были восстановлены и утверждены грамотами

անցնում է Ռուսական կայսրության տիրապետության տակ: Ճարտարապետական առանձնահատկությունների շնորհիվ ԺԹ դարի ամենակարևոր հուշարձաններից մեկը Շուշիի Ղազանչեցոց Սբ. Ամենափրկիչ եկեղեցին է (1868-1887 թթ.): Կարևոր է նշել, որ վերը հիշատակված բոլոր հուշարձանները հարուստ են հայերեն արձանագրություններով, որոնք արժեքավոր տեղեկություններ են պարունակում ինչպես հայոց, այնպես էլ համաշխարհային պատմության համար:

Հիշատակության են արժանի հատկապես Արցախի խաչքարերը, որոնք գաղափարային առումով հայկական խաչքարային արվեստի անբաժանելի մասն են կազմում (2010 թ. հայկական խաչքարը գրանցվել է ՅՈՒՆԵՍԿՕ-Ի ոչ նյութական համաշխարհային արժեքների ցանկում): Ավելին՝ հենց Արցախում են գտնվում հայկական խաչքարագործության ակունքները. պատահական չէ, որ Մեծարանից Սբ. Հակոբ վանքից է մեզ հասել խաչքար կանգնեցնելու վերաբերյալ առաջին գրավոր վկայությունը (դրժբախտաբար, պահպանվել է միայն խաչքարի պատվանդանը՝ 853 թ. հայերեն արձանագրությամբ):

Հայկական հստակ թվագրված ամենահին խաչքարը պահպանվել է Արցախի Վաղուհաս գյուղում. ըստ պահպանված արձանագրության՝ այն կանգնեցվել է 866 թ.: Ընդհանուր առմամբ երկրամասի բուսական աշխարհից ոգեշնչված զարդանախշերը, մարդկանց և այլ պատկերաքանդակներ առանձնահատուկ գեղեցկություն են հաղորդում Արցախի հարուստ ու յուրօրինակ խաչքարերին:

Մեր կարծիքով Ադրբեջանի իշխանությունները չափազանց անհանգստացած են հենց վերոնշյալ պատմական փաստերից, որի պատճառով էլ Արցախի քրիստոնեական հուշարձանները ոչնչացնելու քաղաքականություն են վարում: Այս իմաստով Արցախի ժողովրդի ինքնավարության իրավունքի դեմ Ադրբեջանի սանձազերծած պատերազմը նաև պատերազմ է նրանց մշակույթի դեմ, պատերազմ, որն ուղեկցվում է մշակութային ցեղասպանությամբ:

the representatives of several old Armenian princely families were restored and ratified under decrees issued by Safavid shahs. Many churches preserved from this period show that the three-nave basilica was the main type in Artsakh, just as elsewhere in Armenia.

After Artsakh fell under the rule of the Russian Empire in 1805, church construction again revived in the region. Architecturally, Ghazanchetsots Sourb Amenaprkich (Holy Saviour) Church (1868 to 1887) in Shushi is one of the most important monuments of the 19th century.

It should be noted that all the aforementioned monuments are rich in Armenian inscriptions most of which contain important information from the point of view of Armenian and world history.

Special mention should be made to the cross-stones (khachkars) of Artsakh which show a complete confessional identity to the entire Armenian khachkar culture (in 2010 the Armenian khachkar was inscribed on the Representative List of the Intangible Cultural Heritage of Humanity). Moreover, the Armenian art of khachkar making originated in Artsakh. It is no coincidence that throughout the Armenian environment, the first written proof about erecting a khachkar has reached us from Metsaranits Sourb Hakobavank Monastery of Artsakh (unfortunately, only the khachkar pedestal and an Armenian inscription dated 853 have been preserved). Also, it is in Vaghuhas Village of Artsakh that the oldest khachkar has been preserved with an inscription reporting the exact date (866) of its creation. Generally speaking, the local flora, various sculptural themes, and images of mortals have given an exclusive charm to the khachkars of Artsakh, making them rich and unique.

In our opinion, such as the aforementioned historical facts annoy the authorities of Azerbaijan and lead to their policy of destroying

(фирманами) Сефевидских шахов. Многие церкви, сохранившиеся с этого периода, указывают на то, что как в Арцахе, так и в других регионах Армении в основном строили трехнефные базилики.

После того, как в 1805 году Арцах перешел под власть Российской империи, в регионе вновь возродилось церковное строительство. В архитектурном отношении церковь Казанчецоц Сурб Аменапркич (Св. Всеспасителя) (1868–1887 годы) в Шуши является одним из важнейших памятников армянской культовой архитектуры XIX века.

Следует отметить, что все вышеупомянутые памятники богаты армянскими надписями, большинство из которых содержат важную информацию с точки зрения армянской и региональной истории.

Особо следует отметить о хачкарах Арцаха, которые являются неотъемлемой частью армянской культуры хачкаров (в 2010 году армянский хачкар был внесен в Репрезентативный список нематериального культурного наследия человечества ЮНЕСКО). Более того, армянское искусство изготовления хачкаров зародилось в Арцахе. Недаром первое письменное свидетельство о возведении хачкара дошло до нас из монастыря Мецараниц Сурб Акоп (Св. Иакова) у села Колатак. К сожалению, сохранились только пьедестал хачкара и армянская надпись 853 года. Также именно в селе Вагуас Арцаха находится самый ранний хачкар с надписью, сообщающей точную дату его создания – 866 год. Вообще, богатый орнамент, вдохновленный местной флорой, различные скульптурные изображения и сцены придают хачкарам Арцаха особый шарм, делая их уникальными.

На наш взгляд, именно вышеупомянутые исторические факты раздражают власти Азербайджана и определяют их политику уничтожения христианских памятников Арцаха. В этом контексте война, которую Азер-

Ի դարի վերջին արցախահայությունը, որ դարեր շարունակ պայքարել է իր ազատության և ազգային ինքնությունը պահպանելու համար, վերջապես կարողացավ պատմական հայրենիքի մի մասում հիմնել Արցախի Հանրապետությունը, որը դե ֆակտո անկախ է, բայց ճանաչված չէ ՄԱԿ-ի անդամ երկրների կողմից:

Չկարողանալով համակերպվել Արցախը կորցնելու փաստի հետ՝ Ադրբեջանի իշխանությունները, շարունակելով Խորհրդային Ադրբեջանի քաղաքականությունը, սկսեցին համատարած ոչնչացնել իրենց վերահսկողության ներքո մնացած տարածքների հայկական հուշարձանները:

Առկա են բազմաթիվ փաստեր, որոնք ցույց են տալիս, որ 1994 թ. մայիսից մինչև 2020 թ. սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում Ադրբեջանը հայկական կոթողների՝ հատկապես պաշտամունքային և գերեզմանական հուշարձանների ոչնչացման պետական քաղաքականություն է վարել, որոշ դեպքերում՝ երկրի ռազմական ուժերի ներգրավմամբ:

1991 թ. ի վեր Ադրբեջանի իշխանություններն ավերել են հայկական մի քանի հարյուր եկեղեցիներ և վանքեր, ոչնչացրել միջնադարյան հարյուրավոր գերեզմանոցներ՝ հազարավոր խաչքարերով և գերեզմանաքարերով: Բազմաթիվ եկեղեցիների պատմական արժեք ունեցող հայերեն արձանագրությունները քերվել-ոչնչացվել են՝ դրանք ներկայացվելով որպես այսպես կոչված «աղվանական» հուշարձաններ: Կարևոր է նշել, որ լրջորեն վնասվել կամ ամբողջովին ավերվել են նաև այնպիսի հուշարձաններ, որոնք հեռու են գտնվում ռազմական ակտիվ գործողությունների տարածքներից: Այս փաստերի հիման վրա 2021 թ. դեկտեմբերի 7-ին Արդարադատության միջազգային դատարանը կայացրել է համապատասխան որոշում:

Հայկական մշակութային ժառանգության ոչնչացման մասին խոսելիս պետք է անդրադառնալ նաև Նախիջևանի Ինքնավար Հանրապետությունում գտնվող հայկական հուշարձաններին. վերջին 25 տարվա ընթացքում այս երկրամասի հայկական քրիստոնեական բազմադարյան հուշարձաններն ամբողջովին ոչնչացվել են: Այս

the Christian monuments of Artsakh. In this context, the war waged by Azerbaijan against the Artsakh people's right to self-determination is also a war against their culture, accompanied by cultural genocide.

At the end of the 20th century, the Armenians of Artsakh who had struggled for centuries to live in liberty and preserve their ethnic identity finally succeeded in establishing, in part of their historical homeland, the Republic of Artsakh (Nagorno Karabakh), which is de facto independent, although unrecognised by the UN member states.

The authorities of Azerbaijan who could not reconcile themselves to the loss of Artsakh started the widespread destruction of Armenian monuments, particularly Christian ones, continuing the policy of Soviet Azerbaijan.

There is substantial amount of evidence revealing the fact that during the period between May 1994 and September 2020, the destruction of Armenian monuments, especially religious and funerary ones, was carried out as part of a state policy of Azerbaijan, in some cases, with the involvement of the military forces of the country.

Since 1991, several hundred Armenian churches and monasteries have been destroyed by the authorities of Azerbaijan. Hundreds of medieval cemeteries with thousands of cross-stones and gravestones have been demolished. The historical Armenian inscriptions of many churches have been scraped off to present them as "Caucasian Albanian" monuments. It is important to note that even monuments situated far from active military zones have suffered serious damage or complete destruction. Based on these facts, the decision of the International Court of Justice was made on 7 December 2021.

Regarding the destruction of Armenian heritage, a special mention should also be made of the monuments located in the Au-

байджан ведет против права народа Арцаха на самоопределение, является также войной против его культуры, сопровождающейся культурным геноцидом.

В конце XX века армянам Арцаха, веками боровшимся за свободу и сохранение своей этнической идентичности, наконец удалось создать на части своей исторической родины Республику Арцах (Нагорный Карабах), которая является фактически независимым, хотя и непризнанным государствами-членами ООН государством.

Власти Азербайджана, не смирившиеся с потерей Арцаха, приступили к повсеместному уничтожению армянских памятников, продолжая политику Советского Азербайджана.

Значительное количество фактов свидетельствует о том, что в период с мая 1994 года по сентябрь 2020 года уничтожение армянских памятников, особенно религиозной архитектуры и надгробий, осуществлялось в рамках государственной политики Азербайджана, в ряде случаев с участием вооруженных сил страны.

С 1991 года властями Азербайджана было разрушено несколько сотен армянских церквей и монастырей, снесены сотни средневековых кладбищ с тысячами хачкаров и надгробий. Исторические армянские надписи многих церквей были соскоблены, чтобы представить их как «кавказско-албанские» памятники. Важно отметить, что даже памятники, расположенные вдали от зон боевых действий, серьезно пострадали или полностью разрушены. На основании этих фактов 7 декабря 2021 года Международный суд ООН принял решение о временных мерах в отношении Азербайджана.

Что касается уничтожения армянского наследия, то следует особо отметить памятники, расположенные в Нахиджеванской Автономной Республике: многовековое армянское христианское наследие этого региона было

փաստն ամրագրվել է 2022 թ. մարտի 10-ին Եվրախորհրդարանի ընդունած բանաձևում:

Դժբախտաբար, հայկական հուշարձանների ոչնչացման նույն քաղաքականությունն Ադրբեջանի իշխանություններն իրականացնում են նաև չճանաչված Արցախի Հանրապետության այն տարածքներում, որոնք իրենց վերահսկողության տակ անցան 2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծած 44-օրյա պատերազմից հետո: Առկա են բազմաթիվ ապացույցներ, որ վերջին 30 տարվա ընթացքում այս տարածքներում կառուցված հայկական հուշարձաններն այժմ ավերվում են: Եկեղեցիների պատերից քերվում-հեռացվում են հայերեն արձանագրությունները, որպեսզի դրանք ներկայացնեն որպես «աղվանական» հուշարձաններ: Մի քանի եկեղեցիներ կա՛մ պարզապես պայթեցվել են, կա՛մ պղծվել:

Հայկական խաչքարերի ոչնչացումն «արդարացնելու» նպատակով Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քերիմովը ստաբար հայտարարել է, թե իբր հայերն ամենուր «կեղծ» խաչքարեր են տեղադրել՝ հուշարձանները «հայացնելու» նպատակով:

Հայկական եկեղեցիների արձանագրությունները ոչնչացնելու իր քաղաքականությունն արդարացնելու նպատակով 2021 թ. մարտի 16-ին Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևը հայտարարեց, որ Հադրութի շրջանում գտնվող Ծաղկավանքի՝ ԺԷ դարի շինարարական արձանագրությունը «կեղծ» է և պետք է հեռացվի: Անհրաժեշտ է նշել, սակայն, որ այս արձանագրությունը հրատարակվել է տարբեր հոդվածներում և գիտական աշխատություններում դեռևս ԺԹ դարում՝ Ադրբեջանի Հանրապետության հիմնադրումից շատ տասնամյակներ առաջ:

Ինչպե՞ս դադարեցնել հայկական հուշարձանների ավերումը:

Ռաֆայել Լեմկինի շնորհիվ միջազգային իրավունքը հստակ սահմանել է ցեղասպանության և այլ վայրագությունների միջև եղած տարբերությունները, որի շնորհիվ ՄԱԿ-ի՝ 1948 թ. «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի հիման վրա միջազգային նոր օրենքներ են ընդունվել: Դրանք նաև սահմանում են վանդալիզմի և մի ամբողջ ժողովրդի մշակութային ժառանգության հետևողական ոչնչացման միջև

tonomous Republic of Nakhijevan: the centuries-old Christian Armenian legacy of this region has been completely destroyed during the last twenty-five years. This has been firmly stated in the resolution adopted by the European Parliament on 10 March 2022.

Unfortunately, the same policy of destroying Armenian monuments is being carried out in those territories of the unrecognised Artsakh Republic which came under the control of Azerbaijan in the aftermath of the 44-day war of 2020. There is a significant amount of evidence confirming that the monuments built by Armenians in the last 30 years are now being destroyed. Armenian inscriptions are being removed from the walls of churches in order to present them as “Caucasian Albanian” monuments. Several other churches have simply been blown up or desecrated.

To justify the destruction of Armenian khachkars (cross-stones), Anar Kerimov, the Minister of Culture of Azerbaijan, falsely claimed that Armenians had placed fake khachkars everywhere to “Armenianise” monuments.

To justify the policy of the destruction of Armenian church inscriptions, the president of Azerbaijan, Ilham Aliyev, declared, on 16 March 2021, that the 17th-century construction inscription of the monastery of Tsaghkavank, in Hadrut District, was fake and should be removed. It should be noted, however, that this inscription was published in various books and articles in the 19th century, decades before the foundation of the Republic of Azerbaijan.

So, how can this process be stopped?

Thanks to Raphael Lemkin, a clear distinction was made between genocide and other atrocities under international law, which led to the adoption of new international rules through the 1948 UN Genocide Convention to prevent this crime. These rules also help us distinguish between acts of vandalism and the

полностью уничтожено за последние 25 лет. Об этом с совершенной определенностью указывается в резолюции, принятой Европарламентом 10 марта 2022 года.

К сожалению, такая же политика уничтожения армянских памятников проводится на тех территориях непризнанной Республики Арцах, которые перешли под контроль Азербайджана в результате 44-дневной войны 2020 года. Памятники, построенные армянами за последние 30 лет, сейчас разрушаются. Армянские надписи стирают со стен церквей, чтобы представить их «кавказско-албанскими» памятниками. Несколько церквей просто взорваны или осквернены.

Пытаясь оправдать уничтожение армянских хачкаров, министр культуры Азербайджана Анар Керимов лживо заявил, что армяне повсюду расставили фальшивые хачкары с целью «армянизирования» памятников.

Стараясь оправдать политику уничтожения армянских церковных надписей, президент Азербайджана Ильхам Алиев 16 марта 2021 года заявил, что строительная надпись XVII века монастыря Цахкаванк в Гадрутском районе является подделкой и должна быть удалена. Однако следует отметить, что эта надпись была опубликована в различных книгах и статьях в XIX веке, за десятилетия до основания Азербайджанской Республики.

Так как же остановить этот процесс?

Решение лежит в плоскости международного права. Известно, что в 1948 году ООН приняла Конвенцию о предупреждении преступления геноцида и наказания за него. На ее основе впоследствии были приняты новые международные законы, в которых указана разница между актами вандализма и систематическим уничтожением культурного наследия целой нации. У истоков этих изменений стоял профессор Рафаэл Лемкин, благодаря которому в международном праве было проведено четкое разграничение между геноцидом и другими злодеяниями. Крайне необ-

եղած տարբերությունը: Ամենակարևորը՝ այսօրվա հրամայականն է վերադառնալ Լեմկինի այն հստակ ձևակերպումներին և առաջարկությանը, որոնք հնչել են Մադրիդում 1933 թ. կայացած Քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված կոնֆերանսում «ազգային, կրոնական կամ սոցիալական խմբերի մշակութային և գեղարվեստական հուշարձանների ոչնչացման» հանցագործության վերաբերյալ:

Ռաֆֆի Քորթոշյան
ՀՃՈՒ հիմնադրամի փոխտնօրեն

systematic destruction of the cultural heritage of an entire nation. The bottom line is that it is an imperative to revive Lemkin's clear vision and suggestion, made at the Conference for Unification of Criminal Law (Madrid in 1933), about the crime of the "destruction of cultural and artistic works of racial, religious, or social collectivities."

Raffi Kortoshian
Co-director of RAA Foundation

ходимо вернуться к формулировкам Лемкина, изложенным в докладе для Пятой конференции по унификации международного уголовного права (Мадрид, 1933 год). Он предложил объявить преступлением против международного права действия, направленные на уничтожение культурных и художественных памятников этнических, религиозных и социальных сообществ.

Раффи Кортошян
Замдиректора ФИАА

Հղումներով կարող եք ներբեռնել «Արցախի վտանգված հայկական քրիստոնեական ժառանգությունը» անգլերեն գիրքը և համանուն վավերագրական ֆիլմը, որոնք փաստերով ներկայացնում են Ադրբեջանի իրարահաջորդ (1991 թ.-ից ի վեր) իշխանությունների որդեգրած մշակութային ցեղասպանության քաղաքականությունն Արցախի հայկական ժառանգության նկատմամբ:

Scan the QR Code to download an English-language book and a documentary both entitled *The Endangered Armenian Christian Heritage of Artsakh* and exposing the policy of cultural genocide exercised against the Armenian heritage of Artsakh by the authorities of Azerbaijan since 1991.

По указанным ссылкам вы можете скачать книгу «Армянское христианское наследие Арцаха в опасности» (на английском языке) и одноименный документальный фильм. Представленные факты доказывают, что власти Азербайджана последовательно применяют политику культурного геноцида, начиная с 1991 года.

Հղումով կարելի է տեսնել 2020 թ. 44-օրյա պատերազմից հետո արված բազմաթիվ տեսանյութեր, որոնք ապացուցում են հայկական հուշարձանների ոչնչացումն Ադրբեջանի զինված ուժերի գրաված տարածքներում:

Scan the QR Code to watch videos taken after the 44-day war of 2020 that reveal the destruction of Armenian monuments in the Artsakh lands under Azerbaijani occupation.

В видеоматериалах по ссылке показаны факты уничтожения армянских памятников азербайджанскими военными на территориях, оккупированных после 44-дневной войны 2020 года.

Վտանգված հայկական հուշարձաններ
Արցախի Հանրապետության այն տարածքներում,
որոնք անցել են Ադրբեջանի Հանրապետության վերահսկողության տակ
2020 թ. սեպտեմբերյան 44-օրյա պատերազմից հետո:

Դատելով Ադրբեջանի իշխանությունների գործողություններից՝ այս վտանգված
հուշարձանների մի մասն արդեն ավերված կլինի, մինչ դուք կընթերցեք գիրքը:

Endangered Armenian Monuments
Located in those territories of the unrecognised Republic of Artsakh
which came under the control of the Republic of Azerbaijan
in the aftemath of the 44-Day War of 2020

Judging from the actions of the Azerbaijani government,
by the time you read this book,
some of the endangered monuments will have been destroyed.

Находящиеся под угрозой полного уничтожения армянские памятники,
расположенные на тех территориях непризнанной Республики Арцах,
которые перешли под контроль Азербайджанской Республики
в результате 44-дневной войны 2020 года.

Судя по действиям правительства Азербайджана,
к тому времени, когда вы будете читать эту книгу,
некоторые из этих памятников
будут уже уничтожены.

ԱՍԿԵՐԱՆԻ ՇՐՋԱՆ ASKERAN DISTRICT АСКЕРАНСКИЙ РАЙОН

Սբ. Աստվածածին եկեղեցի (ԺԹ դ.),
Ակնաղբյուր գյուղ

Եկեղեցու շուրջն առկա է ԺԹ-Ի դդ.
գերեզմանատուն:

Sourb Astvatsatsin
(**Holy Mother of God**)
Church (19th c.),
Aknaghbyur Village

A **cemetery**
(19th to 20th centuries)
lying around the church

Церковь **Сурб Аствацацин**
(**Пресв. Богородицы**), XIX в.
Село **Акнахбюр**

Кладбище XIX-XX вв.
вокруг церкви

39.707556N, 46.867167E

Ակնաղբյուրի կամուրջը (ԺԷ դ.),
Ավետարանոց գյուղ

The bridge of **Aknaghbyur** (17th c.),
Avetaranots Village

Мост **Акнахбюра** (XVII в.)
Село **Аветараноц**

39.701750N, 46.849869E

ԱՐՑԱԽ. ՎՏԱՆԳՎԱԾ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Կազմող **Ռաֆֆի Քորթոշյան**
Հայերենի խմբագիր **Հասմիկ Հովհաննիսյան**
Անգլերենի թարգմանիչ **Գայանե Մովսիսյան**
Ռուսերենի թարգմանիչ **Դիանա Գրիգորյան**
Ռուսերենի խմբագիր **Սամվել Մելիքսեթյան**
Համակարգչային ձևավորողներ **Արմեն Գևորգյան, Լիանա Հովհաննիսյան-Քորթոշյան**

Կազմի լուսանկարը՝ **Սասուն Դանիելյանի**
Լուսանկարները՝ **Սամվել Կարապետյանի, Սասուն Դանիելյանի, Ռաֆֆի Քորթոշյանի, Աշոտ Հակոբյանի, Արամ Օհանյանի, Սլավա Սարգսյանի, Գայանե Բուդաղյանի**

Օգտագործված զարդապատկերները՝ **Արմեն Քյուրքչյանի** և **Հրայր Բազէ Խաչերեանի** «**Հայկական զարդարվեստ**» (Երևան, 2010) գրքից:

ARTSAKH: ENDANGERED HERITAGE

Compiled by: **Raffi Kortoshian**
Editor of Armenian text: **Hasmik Hovhannissian**
Translation into English by: **Gayane Movsissian**
Translation into Russian by: **Diana Grigorian**
Editor of Russian text: **Samvel Meliksetian**
Computer Design by: **Armen Gevorgyan, Liana Hovhannissian-Kortoshian**

Cover photo by: **Sasun Danielian**
Photos by: **Samvel Karapetian, Sasun Danielian, Raffi Kortoshian, Ashot Hakobian, Aram Ohanian, Slava Sargissian, Gayane Budaghian**

The book includes ornaments and motiffs from: **Armenian Ornamental Art** by **Armen Kyurkchyan** and **Hrair Hawk Khatcherian** (Yerevan, 2010).

АРЦАХ: НАСЛЕДИЕ В ОПАСНОСТИ

Автор: **Раффи Кортошян**
Редактор армянского языка: **Асмик Ованнисян**
Перевод на английский: **Гаяне Мовсисян**
Перевод на русский: **Диана Григорян**
Редактор русского языка: **Самвел Меликсетян**
Дизайн: **Армен Геворкян, Лиана Ованнисян-Кортошян**

Автор фотографии на обложке: **Сасун Даниелян**
Авторы фотографий: **Самвел Карапетян, Сасун Даниелян, Раффи Кортошян, Ашот Акопян, Арам Оганян, Слава Саргсян, Гаяне Будагян**

В книге использованы прорисовки орнаментов из книги **Армена Кюркчяна** и **Грайра Базе Хачеряна** «**Армянский орнамент**» (Ереван, 2010).

Երբ սույն պատկերագիրքը պատրաստվում էր հրատարակության, 2023 թ. սեպտեմբերի 19-ին Արցախի դեմ Ադրբեջանի կողմից սանձազերծվեց մի նոր պատերազմ, որի ընթացքում էլ ավարտին հասցվեց Արցախի հայության էթնիկ զտումների ալիևյան քաղաքականությունը:
Մեկ շաբաթվա ընթացքում ամբողջապես հայաթափվեց Արցախը:
Այժմ Արցախում վտանգված են Ադրբեջանի հսկողության տակ անցած հայկական բոլոր հուշարձանները, որոնց մասին կանդրադառնանք առաջիկայում տպագրվելիք պատկերագրքի երկրորդ մասում:

During the preparation of this book-album, on 19 September 2023 Azerbaijan launched another war against the Republic of Artsakh, in the aftermath of which, I. Aliyev finally completed his policy of the ethnic cleansing of the region. Within a week, Artsakh was totally emptied of its ethnic Armenian population. At present, all Armenian monuments are under the control of Azerbaijan and facing the imminent threat of destruction. We will expand on this in the second part of our publication.

Данная книга-альбом находилась на этапе подготовки к изданию, когда 19 сентября 2023 года Азербайджан спровоцировал новую войну против Арцаха, в ходе которой Алиев осуществил окончательную этническую чистку арцахских армян.
Все армяне вынужденно покинули Арцах за неделю.
Сейчас армянские памятники, перешедшие под контроль Азербайджана, находятся в опасности.
Вторая часть книги-альбома будет посвящена им.

ISBN 978-9939-843-62-9
9 789939 843629

www.hamazkayin.com

RAA
www.raa-am.org
www.armenianarchitecture.org
www.artsakhmonuments.org